

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ. հուլիսի 6-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 32-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ ղեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ.Դանիելյան):
2. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի գիտական գործունեության մասին (հաշվետվություն և պլանավորում):
3. Իրավագիտության ֆակուլտետի երրորդ կուրսում ազատ հաճախման ինստիտուտի ներդրման արդյունքների քննարկում և ամփոփում:
4. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի զարգացման 2016-2020թթ. ռազամավարական ծրագրով 2016 թվականի գարնանային կիսամյակի համար նախատեսված՝ ամբիոնների կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ:
5. 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
6. Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:
7. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ.Դանիելյան):

Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ.Դանիելյանը ներկայացրեց ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

2. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտամանկավարժական կազմի գիտական գործունեության մասին (հաշվետվություն և պլանավորում):

Դեկանի տեղակալ, պրոֆ. Ա.Հայկյանը իրավագիտության ֆակուլտետի գիտահետազոտական արդյունքներն ըստ նախատեսված, կատարված և նախապատրաստվող աշխատանքների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաղորդումը կցվում է):

3. ԼՄԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի երրորդ կուրսում ազատ հաճախման ինստիտուտի ներդրման արդյունքների քննարկում և ամփոփում:

Դեկան, պրոֆ. Գ. Ղազինյանը ներկաներին տեղեկացրեց, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսում 2015-2016 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ընդհանուր դասընթացների գծով իբրև պիլոտային ծրագիր ներդրվել է ազատ հաճախում լսարանային դասախոսություններին, իսկ մասնակցության համար նախատեսված 2 միավորը որոշվել է համապատասխան դասընթացին հատկացված գործնական պարապմունքներին ուսանողի ներկայության և մասնակցության աստիճանով, ինչպես նաև նախատեսվել է մինչև 2 միավոր բոնուս առավել ակտիվ ուսանողների համար:

Դոց. Ա.Մարգարյանը, ըստ ամբիոնների հաշվետվությունների, ամփոփ ձևով ներկայացրեց ծրագրի դրական կողմերը, կիրառման արդյունքում ի հայտ եկած թերությունները, ինչպես նաև ամբիոնների առաջարկները: Մասնավորապես, իբրև դրական հանգամանք, ընդգծվեց ուսանողների՝ գործնական պարապմունքներին ակտիվ մասնակցությունը, դասախոսություններին այն ուսանողների մասնակցությունը, ովքեր ցանկություն ունեն սովորել: Իբրև բացթողումներ Ա.Մարգարյանն առանձնացրեց մասնակցության միավորների հաշվարկման և բաշխման ընթացակարգի անհստակությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա) 2016-2017 ուսումնական տարում շարունակել պիլոտային ծրագրի իրականացումը.

Բ) Ծրագրի իրականացումը տարածել նաև 2-րդ և 3-րդ կուրսերում, իսկ առանձին դասընթացների գծով՝ նաև 4-րդ կուրսում.

Գ) Ամբիոններում լրացուցիչ քննարկել և քննարկման արդյունքների հիման վրա հստակեցնել միավորների բաշխման կարգը:

4. ԼՄԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի զարգացման 2016-2020թթ. ռազամավարական ծրագրով 2016 թվականի գարնանային կիսամյակի համար նախատեսված՝ ամբիոնների կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Դոց. Ա.Մարգարյանը, ըստ ամբիոնների հաշվետվությունների, ամփոփ ձևով ներկայացրեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի զարգացման 2016-2020թթ. ռազամավարական ծրագրով 2016 թվականի գարնանային կիսամյակի համար նախատեսված՝ ամբիոնների կողմից իրականացված միջոցառումները:

Ձևավորել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի էլեկտրոնային շտեմարան	Մահմանադրական իրավունքի, քաղաքացիական իրավունքի, քրեական իրավունքի, քրեական դատավարության և կրիմինալստիկայի, եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնները բոլոր ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի էլեկտրոնային տարբերակները զետեղել են առայժմ ամբիոնների համակարգիչներում՝
--	--

	<p>հետագայում շտեմարանի ձևավորմանն աջակցելու նպատակով:</p>
<p>Ապահովել դասավանդվող բոլոր դասընթացները հայալեզու գրականությամբ՝ վերահրատակելով առկա դասագրքերը, խնդրագրքերը, ձեռնարկները, մշակելով և հրատարակելով նրանք, որոնք մինչ օրս առկա չեն:</p>	<p>Սահմանադրական իրավունքի ամբիոն- ասավանդվող բոլոր դասընթացների հայալեզու տարբերակները կան, սակայն դրանցից 3-ը («Սահմանադրական իրավունք», «Վարչական իրավունք», «Ֆինանսական իրավունք») թարմացման կարիք ունեն կապված սահմանադրական բարեփոխումների հետ: Իսկ «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» և «Արտասահմանյան երկրների վարչական իրավունք» դասընթացների նյութերը պատրաստ են էլեկտրոնային տարբերակով և մինչև 2016 թ. նոյեմբերի 1-ը կգետեղվեն էլ. կայք-էջում:</p> <p>Քաղաքացիական իրավունքի ամբիոն- Ամբիոնում դասավանդվող դասընթացների հիմնական դասագրքերը, ուսումնական ձեռնարկները առկա են, բացառությամբ մագիստրատուրայում դասավանդվող մի քանիսի:</p> <p>Քրեական իրավունքի ամբիոն- վերահրատարակվելու են քրեական իրավունքի դասագրքերը:</p> <p>Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն- Ամբիոնում դասավանդվող դասընթացների հայալեզու դասագրքերը կան, ծրագրվում է դրանք համապատասխանեցնել ՔԴՕ նախագծին:</p> <p>Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն- Ամբիոնը նախատեսում է «Միջազգային իրավունք» նոր դասագրքի, «ԵՄ ինստիտուտներ և ընթացակարգեր» ուսումնական ձեռնարկի /2-րդ հատոր/ հրատարակումը:</p>
<p>Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով</p>	<p>Սահմանադրական իրավունքի ամբիոն- Այս ուղղությամբ աշխատանքները դեռևս հատվածաբար են իրականացվում, առաջիկայում ամբիոնի նիստում կքննարկվի այդ աշխատանքները համակարգելու հարցը:</p> <p>Քաղաքացիական իրավունքի ամբիոն- Հեռակա ուսուցման ուսանողների համար իրենց լեկրտոնային հասցեների ուղարկվում է հարցաշարերը, ԵՊՀ ի կայքում գետեղված են բոլոր առարկաների ծրագրերը, ժամանակացույցերը: Այս ուս տարվանից նաև ուսումնական ձեռնարկները:</p> <p>Քրեական իրավունքի ամբիոն- Առկա են միայն ծրագրերը:</p> <p>Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն- Առաջիկայում ամբիոնի նիստում</p>

	<p>կքննարկվի այդ աշխատանքները համակարգելու հարցը:</p> <p>Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն- Ամբիոնը հեռակա ուսուցման դասընթացներն ուսանողների համար առավել արդյունավետ դարձնելու համար ապահովել է էլեկտրոնային դասացուցակի, քննության ժամանակացույցի, քննական հարցաշարերի առկայությունը:</p>
<p>Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը:</p>	<p>Մասնանադրական իրավունքի ամբիոն- Այս ուս.տարում հաջողվել է էական բեկում մտցնել այդ ոլորտում, որոշվել է աշխատանքները շարունակել՝ գործնական պարապմունքների ընթացքում ուսանողներին ընտրելու և նրանց ուղղորդելու ու աջակցելու կտրվածքով:</p> <p>Քաղաքացիական իրավունքի ամբիոն- Ամբիոնը աշխատանք է տանում ուսանողների կողմից ՈւԳԸ աշխատանքներին ակտիվ մասնակցելու ուղղությամբ, 2015-2016 թթ ՈւԳԸ նստաշրջանին մասնակցել են շուրջ 47 ուսանող :</p> <p>-2015թ. նոյեմբերի 13-ին տեղի է ունեցել «Դիպլոմային աշխատանք և թեզիս գրելու հմտություններ» խորագրով սեմինար-քննարկում: Մանրամասները հղմամբ՝ http://ysu.am/news/hy/Future-lawyers-learn-the-principles-of-how-to-make-a-research,</p> <p>Քրեական իրավունքի ամբիոն- Ամբիոնի բոլոր դասախոսները ներգրավվել են ՈւԳԸ աշխատանքների ղեկավարմանը:</p> <p>Աշխատանքներից 4-ը ներկայացվել են տպագրության:</p> <p>Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն- Աշխատանքներն իրականացվել են պատշաճ մակարդակով, ներկայացվել է 30 աշխատանք, որոնցից 10-ը ներկայացվել է տպագրության:</p> <p>Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն- Հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է գործել միջազգային և եվրոպական իրավունքի գծով ձևավորված Ուսանողական գիտական ընկերությունը: Նախատեսվում է հաջորդ տարիներին ավելի ակտիվորեն ներգրավել ուսանողներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով աշխատանքների թեմաների ընտրության հարցերին:</p> <p>Այս տարի ևս արձանագրվել է նույն խնդիրը, որն առկա էր նախորդ տարիներին՝ միջազգային և եվրոպական իրավունքի դասավանդումն ավարտվում է ուսուցման 4-րդ տարվա 1-ին կիսամյակում, երբ ուսանողներն սկսում են</p>

	<p>նախապատրաստվել պետական քննություններին և հնարավորություն չեն ունենում բավարար ժամանակ հատկացնել գիտական աշխատանքներ պատրաստելուն:</p> <p>Արդյունքում միջազգային և եվրոպական իրավունքից ուսանողական գիտական աշխատանքների քանակը քիչ է ակնկալվածից:</p>
<p>Իրականացնել հետազոտական ծրագրեր՝ Էկոլոգիական իրավունքի, կրիմինալոգիայի, դատական պրակտիկայի մշակման ոլորտներում՝ ներգրավելով նաև ասպիրանտներին:</p>	<p>Մահամանադրական իրավունքի ամբիոն- Այս փուլում ՄԴ մի քանի դատավորների մասնակցությամբ գիտական հետազոտություններ են իրականացվում ՄԴ-ի որոշումների դասակարգման ուղղությամբ, որոնց ասպիրանտները ներգրավված են միայն աշխատանքային կարգով, նրանք պաշտոնապես փորձագետներ ճանաչված չեն:</p> <p>Քաղաքացիական իրավունքի ամբիոն- (-)</p> <p>Քրեական իրավունքի ամբիոն- իրականացվում է մագիստրոսական թեզերի շրջանակներում:</p> <p>Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն- Դատական պրակտիկայի մշակման ոլորտում կազմվել է թեմատիկ ծրագիր:</p> <p>Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն- (-)</p>
<p>Կազմակերպել Փախստականների իրավունքի, Քրեական իրավունքի և դատավարության, Եվրոպական իրավունքի ոլորտներում ամառային դպրոցներ, դատախաղեր, մրցույթներ:</p>	<p>Մահամանադրական իրավունքի ամբիոն- Ուսումնական տարում այսպիսի միջոցառումներ չի անցկացվել:</p> <p>Քաղաքացիական իրավունքի ամբիոն- (-)</p> <p>Քրեական իրավունքի ամբիոն- (-)</p> <p>Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն- Անցկացվել է 3 դատախաղ բակալավրիատում, 1 դատախաղ մագիստրատուրայում:</p> <p>Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոն- (-)</p>
<p>Ներդնել դասընթացների վերաբերյալ ուսանողների հետադարձ արձագանքման մեխանիզմները՝ յուրաքանչյուր դասընթացի ավարտին:</p>	<p>Մահամանադրական իրավունքի ամբիոն- Առանձին դեպքերում ներդրվել է, սակայն, կարծում եմ, այն ավելի արդյունավետ կդառնա, երբ ներդրվի նաև անհատական էլ. հասցեների շտեմարան ձևավորելու գործընթացը:</p> <p>Քաղաքացիական իրավունքի ամբիոն- (-)</p> <p>Քրեական իրավունքի ամբիոն- (-)</p> <p>Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն- Որոշակիորեն ներդրվել է, սակայն, այն ավելի արդյունավետ կդառնա, երբ ներդրվի նաև անհատական էլ. հասցեների շտեմարան ձևավորելու գործընթացը:</p>

	Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոն-(-)
Ապահովել մասնակցությունը կրիմինալոգիական, իրավական հետազոտություններ անցկացնելու համար հայտարարված դրամաշնորհների մրցույթներին:	<p>Մասնաճյուղական իրավունքի ամբիոն- Ուս. տարվա ընթացքում մասնակցել և հաղթել ենք 4 դրամաշնորհային մրցույթների ու ծրագրերի:</p> <p>Քաղաքացիական իրավունքի ամբիոն-(-)</p> <p>Քրեական իրավունքի ամբիոն- (-)</p> <p>Քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոն- Ուս. տարվա ընթացքում մասնակցել ենք 1 դրամաշնորհային ծրագրի:</p> <p>Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն-(-)</p>
Կազմակերպել օտարերկրյա դասախոսների կողմից առանձին դասախոսություններ, սեմինարների անցկացումը:	<p>Մասնաճյուղական իրավունքի ամբիոն- Կազմակերպվել է մեկ «Կլոր սեղան» քննարկում՝ Մենպեյլեի համալսարանի դասախոսների մասնակցությամբ, նյութերը մինչև ս.թ. հուլիսի 10-ը կներկայացվեն տպագրության:</p> <p>Քաղաքացիական իրավունքի ամբիոն-2016 թմայիսի 24-ին ՌԴ Նախագահի դրամաշնորհը շահած Ռուսաստանի Ժողովուրդների բարեկամության համալսարանի դասախոս, ի.գ.թ. Ն. Բադանայի մասնակցությամբ «Гармонизация законодательства в сфере частного права в странах ЕАЭС» թեմայով կազմակերպվել է սեմինար քննարկում:</p> <p>Քրեական իրավունքի ամբիոն- (-)</p> <p>Քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոն- Ուս. տարվա ընթացքում մասնակցել ենք 1 դրամաշնորհային ծրագրի:</p> <p>Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն-(-) Ուսումնական տարում Հարավ-Ուրալյան պետ. համալսարանի դոցենտ Շահինյանը անցկացրել է դասախոսություններ 3-րդ կուրսի ուսանողների հետ :</p>

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. ԼՄԵՑԻՆ. 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը ներկայացրեց 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի հետևյալ արդյունքները՝

Առկա ուսուցմամբ

1-ին կուրս՝ 175 ուսանող, որից՝ 23-ը գերազանց, 93-ը՝ անբավարար (առաջադիմությունը 47%)

2-րդ կուրս՝ 169 ուսանող, որից 33-ը գերազանց, 81-ը անբավարար, (առաջադիմությունը 52%)

3-րդ կուրս՝ 141 ուսանող, որից 18-ը գերազանց, 73-ը անբավարար, (առաջադիմությունը 48%)

Մախտրատուրա 1-ին կուրս՝ 31 ուսանող, որից 16-ը գերազանց, 3-ը անբավարար, (առաջադիմությունը 90%)

Հեռակա ուսուցում

1-ին կուրս՝ 45 ուսանող, որից 1-ը գերազանց, 35-ը անբավարար, (առաջադիմությունը 22%)

2-րդ կուրս՝ 82 ուսանող, որից 2-ը գերազանց, 66-ը անբավարար, (առաջադիմությունը 19,5%)

3-րդ կուրս՝ 68 ուսանող, որից 0 գերազանց, 54-ը անբավարար, (առաջադիմությունը 20,5%)

4-րդ կուրս՝ 88 ուսանող, որից 0 գերազանց, 73-ը անբավարար, (առաջադիմությունը 17%)

Մագիստրատուրա 1-ին կուրս՝ 41 ուսանող, որից 1-ը գերազանց, 26-ը անբավարար, (առաջադիմությունը 36,5%)

Մագիստրատուրա 2-րդ կուրս՝ 54 ուսանող, որից 0 գերազանց, 36-ը անբավարար, (առաջադիմությունը 33%)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

6. ԼՄԵՑԻՆ.Ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:

6.1 ԼՄԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Տիգրան Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա.Հաստատել Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ Տիգրան Ղազարյանի «Քրեական վարույթ նախաձեռնելու հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք»:

Բ.Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Գ.Ղազինյանին:

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.2 ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ս.Մեղրյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա.Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Պետրոսյանի «Գործառնության սկզբունքների իրացման առանձնահատկությունները վարչական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք».

Բ.Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Ս.Մեղրյան.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.3 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Սիրո Ամիրխանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ս.Մեղրյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա.Հաստատել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Սիրո Ամիրխանյանի «Հանրային իրավունքի իրավաբանական անձինք՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Ավետիսյանին.

Գ.Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը

7. ԼՍԵՑԻՆ. Ընթացիկ հարցեր:

7.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը «ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Հատոր 3» վերտառությամբ աշխատությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ «ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ: Հատոր 3» վերտառությամբ աշխատությունը երաշխավորել տպագրության:

7.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս Վահագն

Գրիգորյանի «Վերաքննիչ դատարանի լիազորությունների հիմնախնդիրները» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս Վահագն Գրիգորյանի «Վերաքննիչ դատարանի լիազորությունների հիմնախնդիրները» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Մուջյան